ՊԱՅՄԱՆԱԳԻՐ հ. #համար
ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ

ք.Երևան #ամսաթիվ

«Քվանտ» վարժարանը, հետագայում՝ **Վարժարան**, ի դեմս տնօրեն Ռ.Վարդանյանի մի կողմից, և #фирмаը, հետագայում՝ **Աշակերտ**, ու #անունազգանուն հետագայում՝ **Ծնող**, մյուս կողմից (**Աշակերտը** և **Ծնողը** հետագայում միասին՝ **Պատվիրատու**), կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Սույն պայմանագրով **Վարժարանը** պարտավորվում է մատուցել ուսումնակրթական ծառայություն, իսկ **Պատվիրատուն**՝ ստանալ այդ ծառայությունները և վճարել դրա դիմաց:

1.2. Ուսումնական տարի՝ #ուսումնական տարի, դասարան՝ #դասարան:

2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Վարժարանը պարտավոր է.

2.1.1 մատուցել ուսումնակրթական ծառայություն՝ ըստ ԿԳՄՍՆ կողմից հաստատված «Քվանտ» վարժարանի հեղինակային հանրակրթական հիմնական ծրագրի՝ **Աշակերտի** դասարանին համապատասխան,

2.1.2 ուսումնական տարվա ընթացքում կենտրոնացված կարգով կազմակերպել ուսումնական նյութի յուրացման ստուգումներ և գնահատել **Աշակերտի** առաջադիմությունը,

2.1.3. **Աշակերտի** ուսումը խթանելու նպատակով կիրառել կրթական տարբեր մեթոդներ,

2.1.4. **Վարժարանում** սահմանված կարգով հրավիրել ծնողական ժողովներ և ծնողներին տեղյակ պահել **Աշակերտի** առաջադիմության մասին,

2.1.5 ուսումնական տարվա ընթացքում «Քվանտ» վարժարանի տարեկան աշխատանքային պլանում կատարվող փոփոխությունների մասին ժամանակին տեղյակ պահել **Աշակերտին** և **Ծնողին,**

2.1.6 բոլոր առարկաներից տարեկան դրական գնահատականներ ունենալու և տարեկան քննությունները հաջող հանձնելու դեպքում **Աշակերտին** փոխադրել հաջորդ դասարան, իսկ շրջանավարտներին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով տալ պետական նմուշի ատեստատ:

2.2 Աշակերտը պարտավոր է.

2.2.1 հաճախել բոլոր դասերին և պարտադիր միջոցառումներին,

2.2.2. ստանալ հանրակրթության պետական չափորոշիչներին համապատասխան գիտելիքներ, ձեռք բերել և տիրապետել համապատասխան հմտությունների և կարողությունների, բավարարել սահմանված արժեքային համակարգին ներկայացվող պահանջները,

2.2.3. բացակայությունների ժամանակ ներկայացնել համապատասխան տեղեկանք բժշկից կամ գրություն՝ ծնողից,

2.2.4. ժամանակին կատարել տրված հանձնարարությունները,

2.2.5. կատարել **Վարժարանի** ներքին կարգապահական կանոններով սահմանված պահանջները:

2.3 Ծնողը պարտավոր է.

2.3.1 հաճախել ծնողական ժողովներին,

2.3.2 **Վարժարանի** տնօրինության կամ դասղեկի հրավերով գալ Վարժարան՝ նախօրոք համաձայնեցնելով այցելության ժամկետը,

2.3.3 հետևել, որ **Աշակերտը** դպրոց ներկայանա սահմանված ժամին և **Վարժարանի** աշակերտի վարքագծի կանոնների պահանջներին համապատասխան հագնված, ունենա պայուսակ, անհրաժեշտ դասագրքեր և տետրեր, տնային հանձնարարությունները կատարած,

2.3.4 **Աշակերտի** ինքնուրույն աշխատանքի համար տանը ստեղծել անհրաժեշտ պայմաններ,

2.3.5 «Քվանտ» վարժարանի տարեկան աշխատանքային պլանով նախատեսված դեպքերում ապահովել աշակերտի մասնակցությունը «Ուղեծիր» ռազմամարզական ճամբարում կազմակերպվող ՆԶՊ և այլ առարկաների դասերին ու վճարել նրա սննդի և կեցության վարձը , ինչը ներառված չէ ուսման տարեկան վարձի մեջ:

2.3.6. **Աշակերտի** կողմից ստացված ուսումնական ծառայությունների համար վճարել սույն պայմանագրով սահմանված կարգով:

2.3.7. կատարել **Վարժարանի** ներքին կարգապահական կանոններով սահմանված պահանջները,

2.3.8. չմիջամտել ուսումնական գործընթացի կազմակերպմանը,

2.3.9.ուսուցիչների կամ աշակերտների հետ տարաձայնությունների առաջացման դեպքում պարզաբանումներ կատարել բացառապես դասղեկի և տնօրինության միջոցով:

2.3.10.Սույն պայմանագրի լուծարման դեպքում ապահովել **Աշակերտի** տեղափոխումը այլ ուսումնական հաստատություն:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

3.1 Վարժարանն իրավունք ունի.

3.1.1 ուսումնական տարվա ընթացքում ստուգել **Աշակերտի** կողմից ուսումնական նյութի յուրացման աստիճանը՝ օգտագործելով **Վարժարանում** ընդունված գնահատման մեխանիզմները,

3.1.2. **Վարժարանի** ներքին կանոնակարգերը խախտելու համար **Աշակերտի** նկատմամբ կիրառել ներգործության համապատասխան միջոցներ,

3.1.3. անհրաժեշտությունից ելնելով՝ փոփոխություններ կատարել ««ՔՎԱՆՏ» Վարժարանի տարեկան աշխատանքային պլանում»,

3.1.4. **Աշակերտի** կամ **Ծնողի** կողմից սույն պայմանագրի դրույթները խախտելու դեպքում միակողմանի լուծել Պայմանագիրը՝ դրա մասին առնվազն տասն օր առաջ տեղյակ պահելով **Աշակերտին և Ծնողին:**

3.2. Աշակերտն իրավունք ունի.

3.2.1 ստանալու հանրակրթության պետական չափորոշչին համապատասխան կրթություն,

3.2.2. սահմանված կարգով մասնակցել **Վարժարանում** գործող խմբակներին, արտադասարանական միջոցառումներին,

3.2.3. մասնակցել **Վարժարանի** կառավարմանը՝ աշակերտական ինքնավարության իրավունքների շրջանակներում,

3.2.4. օգտվել **Վարժարանի** սոցիալ-հոգեբանական ծառայությունից:

3.3 Ծնողն իրավունք ունի.

3.3.1 ստանալու **Աշակերտի** առաջադիմության և վարքի մասին տեղեկություն,

3.3.2 **Վարժարանի** կանոնադրությամբ սահմանված կարգով մասնակցելու **Վարժարանի** կառավարմանը:

3.3.3. միակողմանի լուծել սույն Պայմանագիրը՝ դրա մասին առնվազն տասն օր առաջ տեղյակ պահելով **Վարժարանին:**

4. ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Մատուցված ծառայությունների համար ուսման տարեկան վարձը առանց ավելացած արժեքի հարկի կազմում է #ուսմանվարձիչափ դրամ, որում ներառված չէ դասագրքերի վարձավճարը: Մատուցված ծառայությունների հասույթը հաշվարկվում է ամսական:

4.2 ՀՀ ԱԱՀ-ի մասին օրենքում փոփոխություն կատարվելու դեպքում՝ հանրակրթությունը ԱԱՀ-ով հարկվելու դեպքում, Ծնողը պարտավորվում է վճարել ավելացած արժեքի հարկի գումարը:

4.3 Վճարումները կատարում է **Ծնողը** կանխավճարային կարգով միանվագ կամ **Վարժարանի** հետ համաձայնեցված գրաֆիկով: Տվյալ ուսումնական տարվա առաջին կիսամյակի համար՝ մինչև սեպտեմբերի 1-ը: Պայմանագրի կնքման օրը վճարվում է ուսման վարձի 1/3-ի չափով կանխավճար, իսկ մինչև սեպտեմբերի 1-ը վճարված գումարը լրացվում է մինչև ուսման վարձի 1/2-ը: Ուսման վարձի մնացած մասը վճարվում է մինչև փետրվարի 1-ը:

4.4. Մինչև ուսումնական տարվա վերջը **Վարժարանից** հեռանալու դեպքում մատուցված ծառայությունները հաշվարկվում են դրանց փաստացի մատուցման օրերի քանակով:

4.5. Պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում փոխադարձ հաշվարկները և վճարումները կատարվում են մինչև Պայմանագրի լուծումը:

5. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

5.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կնքելու պահից և գործում է մինչև 1.2 կետում նշված ուսումնական տարվա ավարտը, եթե կողմերից որևէ մեկը այն չի լուծել միակողմանի: Պայմանագրի գործողության դադարման պահից աշակերտը համարվում է «Քվանտ» վարժարանից ազատված:

Ծառայությունների մատուցման սկիզբը՝ #ամսաթիվ:

5.2. **Աշակերտը** և **Ծնողը** պարտավորվում են ծանոթանալ **Վարժարանում** գործող հետևյալ կանոնակարգերին և միայն համաձայնության դեպքում ստորագրել սույն պայմանագիրը.

5.2.1 .«Քվանտ» վարժարանի ընդունելության և փոխադրման կանոնները»,

5.2.2 «Աշակերտի վարքագծի կանոնները»,

5.3.3 «Ուստարվա աշխատանքային պլան»:

5.4. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.5. Սույն պայմանագիրը կազմված է հայերենով, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

5.6 Սույն պայմանագրի դրույթները ենթակա են փոփոխության միայն կողմերի համաձայնությամբ՝ անկանխատեսելի իրավիճակներով պայմանավորված դեպքերում:

6. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՎԱՐԺԱՐԱՆ		ԱՇԱԿԵՐՏ	
«Քվանտ» ՈՒԳԱԿ		#անունազգանուն	
Լիցենզիա	509, 510, 1158		
ՄԲ լիցենզիա	14 ապրիլի 2011թ.		
Հ/հաշիվ	163018109112	**ԾՆՈՂ**	
Հայէկոնոմբանկի «Շենգավիթ մ/ճ»		Անձնագիր՝	#անձնագիր
Հասցե՝ Բագրատունյաց 23/2		Հասցե՝	#հասցե
Հեռախոս՝ 422-217, 422-522		Հեռախոս՝	#հեռախոս
Տնօրեն՝	Ռ.Վարդանյան	Ծնող՝	